

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴՐԱՄԱՆԻՇԵՐԸ, ԴՐԱՆՑ ՍՏՈՒԳՄԱՆ,
ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ
ԱՐՏԱՊԱՏԿԵՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

ՀՀ թղթադրամների և մետաղադրամների նկարագիրը

Հայաստանի Հանրապետությունում օրինական վճարամիջոց են համարվում շրջանառության մեջ գտնվող ՀՀ դրամանիշերը՝ թղթադրամները և մետաղադրամները (այդ թվում հուշադրամները):

ՀՀ թղթադրամները 500 դրամից 100000 դրամ անվանական արժեքներով թողարկումներն են, որոնց նկարագիրը հետևյալն է.

Անվանական արժեքը (ՀՀ դրամ)	Չափերը (մմ)	Հիմնական գույները	Պատկերները
500 (1999թ. նմուշի)	129 x 72	մոխրագույն	Ա. Թամանյանի դիմանկարը, Երևան քաղաքի հատակագիծը, ՀՀ Կառավարության շենքը
1000 (1999թ. նմուշի) (2001թ. նմուշի)	136 x 72	կապույտ, կանաչ	Ե. Չարենցի դիմանկարը, Հին Երևանի պատկերը՝ երկհարկանի շենք և ֆայտոն
5000 (1999թ. նմուշի) (2003թ. նմուշի)	143 x 72	կանաչ, դարչնագույն	Հ. Թումանյանի դիմանկարը, Լոռու բնությունը, դրվագ Մ. Սարյանի կտավից
10000 (2003թ. նմուշի) (2006թ. նմուշի) (2008թ. նմուշի)	150 x 72	մանուշակագույն	Ավ. Իսահակյանի դիմանկարը, Գյումրիի պատկերը
20000 (1999թ. նմուշի) (2007թ. նմուշի)	150 x 72 155 x 72	դեղին, դարչնագույն, չազանակագույն	Մ. Սարյանի դիմանկարը, դրվագ Մ. Սարյանի «Հայաստան» բնանկարից
50000 (2001թ. նմուշի)	160 x 79	դարչնագույն, չազանակագույն	Ս. Էջմիածնի Սայր Տաճարը, Ս. Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծ արքայի ձեռքերում հայկական եկեղեցին

100000 (2009թ. նմուշի)	160 x 72	երկնագույն, դարչնագույն	Աբգար Ե թագավորը, դրվագ Մկրտում Հավնաթանյանի սրբանկարից
----------------------------------	----------	----------------------------	--

ՀՀ թղթադրամների դիմերեսին զետեղված են ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և ՀՀ ֆինանսների նախարարի ստորագրությունները:

ՀՀ մետաղադրամները 10 լումայից 500 դրամ անվանական արժեքներով թողարկումներն են, որոնց նկարագիրը հետևյալն է.

Անվանական արժեքը	Տրամագիծը (մմ)	Ջանգվածը (գր)	Դրամաշուրքը
10 լումա (1994թ. նմուշի)	16,0	0,59	հարթ
20 լումա (1994թ. նմուշի)	18,0	0,75	հարթ
50 լումա (1994թ. նմուշի)	20,0	0,93	հարթ
1 դրամ (1994թ. նմուշի)	22,0	1,39	ատամնավոր (90 ատամ)
3 դրամ (1994թ. նմուշի)	24,0	1,63	ատամնավոր (100 ատամ)
5 դրամ (1994թ. նմուշի)	26,0	1,98	հարթ
10 դրամ (1994թ. նմուշի)	28,0	2,3	հարթ
(2004 թ. նմուշի)	20,0	1,3	ատամնավոր (93 ատամ)
20 դրամ (2003թ. նմուշի)	20,5	2,75	հարթ

50 դրամ (2003թ. նմուշի)	21,5	3,5	ատամնավոր (100 ատամ)
100 դրամ «Շախմատի 32-րդ օլիմպիադա» (1996թ. նմուշի, հիշատակային)	29,5	10,8	ատամնավոր (156 ատամ)
100 դրամ «Չարենց -100» (1997թ. նմուշի, հրեյանական)	29,5	10,8	ատամնավոր (156 ատամ)
100 դրամ (2003թ. նմուշի)	22,5	4,0	ատամնավոր (105 ատամ)
200 դրամ (2003թ. նմուշի)	24,0	4,5	ատամնավոր (112 ատամ)
500 դրամ (2003թ. նմուշի)	22,0	5,0	ատամնավոր ընդհատվող (4x13 ատամ)

ՀՀ բոլոր մետաղադրամների դիմերեսին պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

Շրջանառությունից հետ կանչված թղթադրամներն են.

Անվանական արժեքը (ՀՀ դրամ)	Չափերը (մմ)	Հիմնական գույները	Պատկերները
10 (1993թ. նմուշի)	125 x 62	շագանակագույն, մանուշակագույն	Սասունցի Դավթի արձանը, Արարատ լեռը
25 (1993թ. նմուշի)	125 x 62	շագանակագույն	Առյուծի որմնանկար, սեպագիր քար էրեբունի ամրոցից
50 (1993թ. նմուշի)	125 x 62	կապույտ, կարմիր	Հայաստանի պատմության թանգարանի շենքը և Ազգային ժողովի շենքը

50 (1998թ. նմուշի)	122 x 65	վարդագույն, կապույտ	Արամ Խաչատրյանի դիմապատկերը և «Գայանե» բալետից մի դրվագ
100 (1993թ. նմուշի)	135 x 65	մանուշակագույն, կարմիր	Ջվարթնոցի տաճարը, Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքը
100 (1998թ. նմուշի)	122 x 65	մանուշակագույն, վարդագույն	Վիկտոր Համբարձումյանի դիմապատկերը, Բյուրականի աստղադիտարանը
200 (1993թ. նմուշի)	135 x 65	շագանակագույն, կանաչ	Ս. Հռիփսիմեի տաճարը, գարդանախշեր
500 (1993թ. նմուշի)	135 x 65	կանաչ, շագանակագույն	Տիգրան Մեծ արքայի արծաթե դրամը, բաց գիրք և փետուր
1000 (1994թ. նմուշի)	145 x 68	շագանակագույն, նարնջագույն	Մ. Մաշտոցի արձանը, Աղուդի գյուղի կոթողը
5000 (1995թ. նմուշի)	145 x 71	կանաչ, մանուշակագույն	Գառնիի հեթանոսական տաճարը, Անահիտ աստվածուհու դիմաքանդակը

Շրջանառությունից հետ կանչված թղթադրամները փոխանակման են ընդունվում միայն ՀՀ կենտրոնական բանկում:

ՀՀ հուշադրամներն ունեն յուրահատկություններ ինչպես հատկանիշների, այնպես էլ հատման և թողարկման գործընթացների առումով: ՀՀ հուշադրամների թողարկման թեման, ուրվագիծը, մետաղի տեսակը, անվանական արժեքը և տեխնիկական չափանիշները որոշվում են համաձայն ՀՀ կենտրոնական բանկում գործող կարգերի՝ յուրաքանչյուր հուշադրամի համար առանձին:

ՀՀ հուշադրամներն իրացվում են ՀՀ կենտրոնական բանկի «Դրամագետ» վաճառարահից իրենց վաճառքի գնով: Հուշադրամը որպես վճարման միջոց հանդես է գալիս իր անվանական արժեքով:

Դրամի վճարունակության հատկանիշները

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նկարագրին և վճարունակության հատկանիշներին համապատասխանող թղթադրամներն ու մետաղադրամները համարվում են վճարունակ:

Վճարունակ են համարվում և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից վճարման են ընդունվում այն թղթադրամները, որոնք՝

- ունեն աննշան ծակոտիներ, պատռվածքներ, մաշվածություն, բծեր, գրառումներ,
- չնչին ներկոտված են, սակայն տեսանելի են հիմնական պատկերները և պաշտպանական հատկանիշները. աննշան այրված են, սակայն պահպանված է թղթադրամի ամբողջականությունը:



Ունեն աննշան ծակոտիներ, մաշվածություն, բծեր և գրառումներ



Աննշան պատռվածքներ



Ներկրտված են, սակայն տեսանելի են հիմնական պատկերները և պաշտպանական հատկանիշները

Վճարունակ են համարվում և ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից վճարման են ընդունվում այն մետաղադրամները, որոնք՝

- ունեն աննշան վնասվածքներ, կրել են քիմիական ազդեցություն, սակայն պահպանվել են պատկերները և արժեքնիշը արտահայտող թվերը:

Վճարունակ են համարվում, սակայն կարող են փոխանակվել միայն բանկերում այն թղթադրամները, որոնք՝

- չեն պահպանել ամբողջականությունը, սակայն ակնհայտորեն պահպանված է թղթադրամի մակերեսի առնվազն 60%-ը, և պահպանված մասը թույլ է տալիս որոշել թղթադրամի իսկությունը,
- միմյանց կպցված են նույն թղթադրամին անվիճելիորեն պատկանող ոչ ավելի, քան 3 պատռված մասերը,
- ներկրտվել կամ զոնաթափվել են, սակայն տեսանելի են պատկերները և պաշտպանական հատկանիշները, որոնք թույլ են տալիս որոշել թղթադրամի իսկությունը:



Զի պահպանվել ամբողջականությունը, սակայն առկա է թղթադրամի առնվազն 60%-ը



Պատռված և կպցված են նույն թղթադրամի ոչ ավելի, քան 3 մասերը



Ներկուտվել կամ գունաթափվել են, սակայն տեսանելի են պատկերները և պաշտպանական հատկանիշները, որոնք թույլ են տալիս որոշել թղթադրամի իսկությունը

Վճարունակ են համարվում, սակայն կարող են փոխանակվել միայն բանկերում այն մետաղադրամները, որոնք`

- փոխել են նախնական ձևը (ծռված, տափակացված), կրել են բարձր ջերմության կամ քիմիական ազդեցություն (գունաթափված, մասամբ հալված, քայքայված), և որոնց իսկությունը կասկած չի հարուցում:

Անվճարունակ են համարվում և ենթակա չեն փոխանակման այն թղթադրամները, որոնց ամբողջականությունը չի կազմում թղթադրամի մակերեսի 60%-ը, որոնք ունեն վճարունակության մարման մասին նշումներ, միտումնավոր ձևափոխված են (անվանական արժեքը, թղթադրամի չափերը և պատկերների չափերը), ակնհայտորեն միտումնավոր հեռացված են պաշտպանական հատկանիշները (հոլոգրաֆիկ պատկերը, փայլաթիթեղը):



Թթադրամի 60%-ից ավելին չի պահպանվել



Վեց անցքով դակած թթադրամ



«ՆՄՈՒՇ» մակագրությամբ թթադրամ



Պատռված և կպցված են տարբեր թթադրամների մասերը
Անվճարունակ են համարվում և ենթակա չեն փոխանակման այն մետաղադրամները, որոնց ամբողջականությունը պահպանված չէ և որոնք մասնատվել են:


Դրամանիշերի փոխանակումը ՀՀ առևտրային բանկերում

1. ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը պարտավոր են

- Իրենց հաճախորդներից, ինչպես նաև անհատ քաղաքացիներից ընդունել և փոխանակել հնամաշ ու վնասված ՀՀ դրամանիշերը, որոնք պահպանել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վճարունակության հատկանիշները: Ընդ որում, հնամաշ և վնասված դրամանիշերը տեղում փոխանակվում են պիտանի դրամանիշերով՝ առանց հատուկ հաշվապահական ձևակերպումների և անվճար:
- Իրենց հաճախորդներից, ինչպես նաև անհատ քաղաքացիներից ընդունել իսկության կամ վճարունակության առումով կասկածելի դրամանիշերը և հանձնել ՀՀ կենտրոնական բանկին՝ փորձաքննությամբ դրանց փոխանակման հնարավորությունը պարզելու համար:
- Իրենց հաճախորդներից ընդունել և նրանց ցանկությամբ փոխանակել մեկ անվանական արժեքի դրամանիշերը մեկ այլ անվանական արժեքի դրամանիշերով՝ անվճար:

2. Բանկերը կարող են իրենց հաճախորդներ չհանդիսացող կազմակերպություններից և անհատ քաղաքացիներից ընդունել և նրանց ցանկությամբ փոխանակել մեկ անվանական արժեքի դրամանիշերը մեկ այլ անվանական արժեքի դրամանիշերով՝ յուրաքանչյուր դրամանիշից մինչև 50-ական հատը անվճար, իսկ մնացած մասը՝ իրենց կողմից սահմանված սակագների համաձայն:

ՀՀ դրամանիշերի փոխանակումը և ընդունումը փորձաքննության



ՀՀ կենտրոնական բանկում ՀՀ դրամանիշերի փոխանակումը

ՀՀ կենտրոնական բանկը քաղաքացիներից ընդունում և փոխանակում է մեկ անվանական արժեքի դրամանիշը մեկ այլ անվանական արժեքի դրամանիշով:

Եթե մեկ գործարքի ընթացքում *միևնույն անվանական արժեքի* փոխանակվող դրամանիշերի քանակը չի գերազանցում 50 հատը, փոխանակումն իրականացվում է անվճար:

Եթե մեկ գործարքի ընթացքում *միևնույն անվանական արժեքի* փոխանակվող դրամանիշերի քանակը 51 և ավելի է, փոխանակումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկում գործող սակագների և դրույքաչափերի համաձայն:

Մեկ գործարքի ընթացքում միևնույն անվանական արժեքի 51 և ավելի դրամանիշերի փոխանակման դեպքում քաղաքացին լրացնում է հայտ: Հայտը բավարարվում է ըստ հայտում ներկայացված տեսակային կազմի:



ՀՀ կենտրոնական բանկում վճարունակության առումով կասկածելի դրամանիշերի ընդունումը փորձաքննության

ՀՀ կենտրոնական բանկը քաղաքացիներից և իրավաբանական անձանցից ընդունում է հնամաշ, վճարունակության և իսկության առումով կասկածելի դրամանիշերը փորձաքննության ***առանց սահմանափակումների և անվճար:***

Քաղաքացին լրացնում է համապատասխան դիմում և այն, դրամանիշի հետ միասին, հանձնում փոխանակման դրամարկղի գանձապահին: Գանձապահը լրացնում է դիմումին կից անդորրագիրը և տրամադրում քաղաքացուն:

Փորձաքննության ներկայացրած դրամանիշի դիմաց փոխհատուցում ստանալու համար քաղաքացին գանձապահին է ներկայացնում անդորրագիրը: Փոխհատուցումը քաղաքացուն իրականացվում է հիմք ընդունելով փորձագետի եզրակացությունը:

Փորձաքննության ընթացքում դրամանիշերի վճարունակությունը որոշելու ժամանակ պետք է հաստատվի

- դրամանիշերի իսկությունը,
- պատռված և կպցված մասերով դրամանիշերի դեպքում տարբեր մասերի պատկանելությունը նույն դրամանիշին,
- դրամանիշի պահպանված մակերեսի չափը:

Այն դրամանիշերը, որոնց իսկությունը կասկած չի հարուցում, սակայն որոնք զործարանային խոտան են, փոխանակվում են միայն ՀՀ կենտրոնական բանկում: Փորձագետի դրական եզրակացության դեպքում (երբ դրամանիշը դասվել է որպես փոխանակման ենթակա) քաղաքացուն տրամադրվում է համարժեք գումարը:

Բացասական եզրակացության դեպքում (երբ դրամանիշը դասվում է կեղծ կամ անվճարունակ) քաղաքացուն տրամադրվում է միայն փորձագիտական եզրակացության մեկ օրինակը, իսկ դրամանիշը չի վերադարձվում և չի փոխհատուցվում: Անվճարունակ դրամանիշը համարվում է ոչնչացման ենթակա և պահվում է առանձին, 6 ամիս ժամկետով, որի ընթացքում հանձնողն իրավունք ունի ծանոթանալու այդ դրամանիշին: Կեղծ դրամանիշերը տրամադրվում են ՀՀ ոստիկանությանը:

Շրջանառության մեջ առկա ***վճարունակ հուշադրամները*** ՀՀ կենտրոնական բանկին վերադարձնելու դեպքում դրանք ընդունվում և փոխհատուցվում են միայն հուշադրամի անվանական արժեքով:

Ենթակա են ընդունման ՀՀ կենտրոնական բանկի կողմից հետագա փորձաքննության նպատակով



Պարզելու թղթադրամի 60%-ից ավելի պահպանվածությունը



Պարզելու թղթադրամի կազմված մասերի նույն թղթադրամին պատկանելությունը



Պարզելու այրված թղթադրամի իսկությունը և վճարունակությունը

Բացի այդ, թղթադրամների վրա փակցված հուլոգրամները կամ կինեգրամները պարունակում են տարբեր դիմանկարներ և զարդանախշեր, որոնք դիտման անկյան չնչին փոփոխման ընթացքում նույն տեղում փոխարինում են միմյանց:

Օրինակ, 100000 դրամանոցի կինեգրամում թագավորի գլխի լուսապսակը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում շարժվում է աջից դեպի ձախ: «100000» թվի ներքևում գտնվող ստվերը լույսի անկման անկյան փոփոխության դեպքում շարժվում է վերից վար:



Մետաղադրամների իսկությունը ստուգելու համար անհրաժեշտ է ստուգել տվյալ անվանական արժեքի մետաղադրամի տրամագիծը, զանգվածը, եզրաշուրթը և համոզվել, որ դրանք համապատասխանում են ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված չափանիշներին: Բացի այդ, մետաղադրամների վրա առկա պատկերները (անվանական արժեքն արտահայտող թիվը, գրառումները, թողարկման տարեթիվը, ՀՀ զինանշանը, զարդանախշերը) պետք է լինեն հստակ՝ իրենց ներհատուկ մանր էլեմենտների առկայությամբ: Մետաղադրամների իսկությունը ստուգելիս կարելի է հաշվի առնել նաև այն, որ 20, 50 և 100 դրամանոց մետաղադրամները պարունակում են երկաթ՝ ուստի կարող են ստուգվել մագնիսով:

ՀՀ դրամանիշերի իսկությունը ստուգելիս անհրաժեշտ է ստուգել մեկից ավելի պաշտպանական հատկանիշ, իսկ տարակուսանքի դեպքում համեմատել այն իսկական դրամանիշի հետ:

Կեղծ դրամանիշեր իրացնելու նպատակով պատրաստելը կամ պահելը կամ դրանց իրացնելը պատժվում է ազատազրկմամբ երեքից յոթ տարի ժամկետով:

ՀՀ թղթադրամի արտապատկերումը

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ գովազդի կամ այլ նպատակներով ՀՀ թղթադրամի պատկերը թղթի վրա արտապատկերված ձևով օգտագործելու դեպքում օգտագործվող պատկերի գծային չափերը (լայնությունը և երկարությունը) պետք է փոքր կամ մեծ լինեն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված իրական չափերից առնվազն 25 տոկոսով, ընդ որում նշված չափերով դիմերեսի և դարձերեսի պատկերները թույլատրվում է միաժամանակ օգտագործել միայն թղթի մեկ կողմում բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից այդ պատկերներն օգտագործելու դեպքերի:

Արտապատկերման կանոնների խախտման համար վարչական պատասխանատվության միջոցներ է կիրառում պետական կառավարման լիազորված մարմինը՝ «Գովազդի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

